# ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԹՈՇԱԿԱՎՈՐԱՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

*1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ –ի «Թոշակավորման և փոխատեղումների հանձնաժողովի» կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

# ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

# կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԹՈՇԱԿԱՎՈՐԱՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ղեկավարվելով **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

*1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ –ի թոշակավորման և փոխատեղումների հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

**ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի**

**նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան**

Հաստատված է ՀՀ ԿԳՆ «ԱՊՔ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 2018թ.
հունվարի 8-ի N 4 նիստում

ՀՀ ԿԳՆ «ԱՊՔ» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### 1. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) սահմանում է ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներքոլեջային կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները.

**2.** Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության որոշումները, ՀՀ ԿԳ նախարարի հրամանները, ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

**3.** Ուսանողական նպաստը (լրիվ կամ մասնակի) փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների և ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ֆինանսական (արտաբյուջետային) միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

4. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են քոլեջի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների վրա:

## 2. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները

**5.** Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով, մրցութային հիմունքով ուսման վարձավճարի փոխհատուցում տրամադրվում է՝ պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար հատկացված անվճար ուսուցման տեղում՝

**ա.** մինչև 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող քոլեջի ընդունելության կարգով առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողներին՝ մինչև ուսումնառության ավարտը.

**բ.** 19 և ավելի տարիք ունեցող հիմնական կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող առկա համակարգում քոլեջի ընդունելության կարգով ընդունված ուսանողին մինչև 19 տարին լրանալը ընտրված ուսանողների մրցույթից հետո թափուր տեղի առկայության դեպքում:

**գ.** միջնակարգ կրթության հիմքով նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով քոլեջի ընդունելության կարգով ընդունված ուսանողին:

**դ.** միջին մասնագիտական կրթական ծրագրերով քոլեջ ընդունված և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

*1) առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց, որոնց վճարվում է կրթաթոշակ 150 %-ի չափով համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,*

*2) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,*

*3) զոհված զինծառայողի երեխա-ուսանողին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձանց կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (զորացրվելուց հետո 3 տարվա ընթացքում) դիմորդներից ամենաբարձր միավոր ունեցող անձանց քոլեջին Հայաստանի կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղում՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:*

**է.** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի № 651-Ն որոշմամբ սահմանված կարգով քոլեջ ընդունված սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

**զ.** Քոլեջում ուսումնական տարին սկսելուն նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում իրականացվում է փոխատեղում՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցմամբ ուսանողների համար, ըստ մասնագիտությունների: Փոխատեղման արդյունքում ըստ սահմանված օրենքի անվճար համակարգում ընդգրկված, սակայն նախորդ ուսումնական տարվա արդյունքով բարձր առաջադիմություն չցուցաբերած ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ, իսկ վճարովի համակարգի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները անվճար ուսուցման համակարգ: Մեկ ուսումնական տարվա ուսանողի առաջադիմության արդյունքը հաշվարկվում է քոլեջի թոշակավորման հանձնաժողովի կողմից քոլեջում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ՝ (հարյուրերորդականի ճշտությամբ) քննությունների, ստուգարքների արդյունքի հիման վրա, ըստ առաջադիմության: Քոլեջի տնօրենի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է անվճար և վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:

1) Փոխատեղման ժամանակ առաջադիմության արդյունքների հավասար միավորների դեպքում առաջնահերթությունը տրվում է՝

*ա. պետական կրթական չափորոշիչով հաստատված ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկաներից բարձր միավորներ ստացած ուսանողներին,*

*բ. նախորդ տարում անվճար համակարգում սովորող ուսանողներին,*

*գ. քիչ բացակայություններ ունեցող ուսանողներին,*

*դ. սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվող ուսանողներին /համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում/, և զինվորական ծառայությունից զորացրված ուսանողներին:*

**2)** Սույն կանոնակարգի 5-րդ կետում նշված ցուցակները և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 10-ը ներկայացնում են քոլեջի կառավարման խորհրդի քննարկմանը, որից հետո քոլեջի տնօրենի հաստատման: Նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև այլ խախտումներ հայտնաբերելու դեպքում քոլեջի կառավարման խորհուրդը իրավասու է տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը ետ վերադարձնել քոլեջի թոշակավորման հանձնաժողով՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով:

Սխալներ և ընթացակարգի խախտումներ թույլ տրված անձիք ենթակա են կարգապահական տույժերի, որը ձևակերպվում է քոլեջի տնօրենի հրամանով:

**6.** Ուսումնառությունը ընդհատված (ժամկետային զինծառայության զորացրվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (ՀՀ պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

**7.** Այլ պատճառով ուսումնառությունն ընդհատած ՀՀ-ի տարբեր քոլեջներից ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (ցանկացած մասնագիտությամբ) միջին մասնագիտական կրթական

համակարգի առկա ուսուցմամբ տեղափոխված ուսանողը առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո կարող է օգտվել ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից:
**8.** ՀՀ կառավարության 2017թ հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. նոյեմբերի 28-ի № 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 749-Ն որոշմամբ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող քոլեջում կիսամյակային առաջադիմության հիման վրա իրականացվող փոխատեղումից անցումը ուսումնական տարվա վերաբերվում է 2017-2018 ուսումնական տարվա և հետագայում ընդունված ուսանողներին իսկ նախորդ տարիներին ընդունված ուսանողների փոխատեղումը իրականացվում է ըստ կիսամյակների համաձայն ուսումնական հաստատության և ուսանողի կնքած պայմանագրի:
9. 1-ին կուրս ընդունված ուսանողի համար հիմք ընդունել նախորդ կրթական ծրագրերի գերազնաց և լավ առաջադիմությունը:

## 3. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները

10. Քոլեջը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև 10 % -ին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները, իր արտաբյուջետային միջոցներից մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝
ա. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,
բ. միկողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին,
գ. 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի երերխաներին,
դ. վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի ուսանողներին,

ե. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
զ. Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների երեխա-ուսանողներին,
է. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
ը. Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին քոլեջի կառավարման խորհրդի հայացողությամբ:
11. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից երկու շաբաթ առաջ քոլեջի տնօրենը տալիս է հայտարարություն ուսանողներին տեսանելի վայրում, ինչպես նաև ինտերնետային կայքում վճարովի հիմունքով սովորող ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հիման վրա ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներ ընդունելու մասին:
12. Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից մինչև կիսամյակի ավարտը, իսկ տվյալ ուսումնական տարում քոլեջ ընդունված ուսանողների դիմումներն ընդունվում են կիսամյակն սկսելուն նախորդող առաջին շաբաթվա ընթացքում: Ուսանողը քոլեջի տնօրենի

անունով դիմումի հետ մեկտեղ կցում է սույն կանոնակարգի 10-րդ կետի ա-ը ենթակետով սահմանված սոցիալական վիճակի վերաբերյալ հաստատող փաստաթղթերը (առկայության դեպքում):
13. Հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները և համապատասխան փաստաթղթերը քննարկում են քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի նիստում քոլեջի տնօրենի ներկայությամբ: Խորհրդի կողմից հաստատվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անվանական կազմը, որը քոլեջի տնօրենի կողմից հրապարակվում և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին 3 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարված ժամկետից ուսանողների դիմումները ենթակա չեն քննարկման:
14.Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է պետական լիազորված մարմինը:

## 4. Պետական կրթաթոշակ հատկացնելու կարգն ու պայմանները

15. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին, ինչպես նաև ՀՀ կառավարության սահմանված կարգով ընդունված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքների ձևով:
16. Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշման (ակտիվության) ցուցանիշներ են համարվում,
1) մասնակցությունը քոլեջի ուսանողական, հասարակական աշխատանքներին,
2) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական, գիտական նստաշրջաններին, շինարարական ջոկատների աշխատանքներին,
3) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ քոլեջի հայեցողությամբ:
17. Քոլեջի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ ուսանողին պետական կրթաթոշակ տրվում է

ուսանողական նպաստի համակրգում ընդունված ուսանողին:
18. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից քոլեջի ներքին կարգապահական կանոնների պահպանման, նշված կանոնների խախտման առիթով տնօրենի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են հանդիսանում պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:
19. ՀՀ կառավարության յուրաքանչյուր տարի, ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների հաստատում է պետական կրթաթոշակներ ստացողների թիվը և չափը:
20. Պետության կողմից կրթաթոշակ տրվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորող ուսումնական հաստատությունների ուսանողների հանձինս քոլեջի:
21. Քոլեջում ուսանողի պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող 2 շաբաթվա ընթացքում քոլեջի կառավարման մարմնի (խորհրդի) նիստում:

Քոլեջի տնօրենի ներկայությամբ քոլեջի կառավարման մարմինը (խորհրդը) քննարկում է կիսամյակի արդյունքները և օրենքով նախատեսված պայմաններին բավարարելու դեպքում սահմանվում է պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմը, որը տնօրենի կողմից հրապարակվում է հրամանի տեսքով և փակցվում տեսանելի վայրում:

22. Պետական կրթաթոշակների չօգտագործված մասը հատկացվում է սույն կարգի 16-րդ կետի պահանջները բավարարող ուսանողին՝ մրցութային կարգով:

23.Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի ակադեմիական արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինծառայության զորակաչվելու դեպքում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվում է:

24.Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացը իրականացնում է քոլեջը:

25. Քոլեջը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել ներքոլեջային կրթաթոշակներ:

**Վարչ. աշխ. գծ. փոխտնօրեն՝ Տ. Ա. Եղիազարյան**